ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 09 2025թ.
№ ԿԱՊՆ/1397

«ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ տնօրեն
Դ. Մնացականյանին
ՀՎՀՀ 00170838
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., շ 32/4
հեռ. 094-12-11-12

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-16/1» ծածկագրով բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ -ն հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԲՄԱՊՁԲ-25-16/1-1 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ «Մնացականյան Դավիթ» ԱՁ-Ն (ՀՎՀՀ՝ 25295761) 2024 թվականի հունվարի 26-ից մինչև 2026 թվականի հունվարի 26-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի և «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության տնօրեն Դավիթ Էդվարդի Մնացականյանին է պատկանում «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-25-16/1-1 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. սեպտեմբերի 3-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 14 160 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարը, ապա «Մեգա Էներգո» ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2025թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի ապահովման գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ պայմանագրի ապահովման գումարը գանձելու ուղղությամբ:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-25-16/1-1 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով ապրանք ձեռքբերելու դեպքում «Մեգա Էներգո» ՍՊԸ-ն պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ